ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմենֆարմ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2024/4-7-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
94	Էնզիմեքս L9	Ֆրանկլաբ	Բաղադրությունը- իրենից ներկայացնում է բուրանյութի հոտով թափանցիկ հեղուկ խտանյութ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է N,N-դիդեցիլ-N-մեթիլ-պոլի(օքսիէթիլ) ամոնիումի պրոպիոնատ (ՉԱՄ), դիդեցիլ դիմեթիլ ամոնիումի քլորիդ (ՉԱՄ), ֆերմենտների համալիր (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), ինչպես նաև ֆունկցիոնալ բաղադրամասեր՝ ՄԱՆ (մակերեսային ակտիվ նյութեր), ներկանյութ, բուրանյութ, ջուր և այլն: Ներկայացվող ապրանքը պարունակում է նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը հաստատված է օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չի պարունակում որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվում է 0,5%- 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ՝գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային

			(ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը 5-30 րոպեում (ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով), ինչպես նաև օժտված է ակտիվությամբ հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, լեգիոնելոզի) հարուցիչների նկատմամբ: Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը 15°C- 25°C : Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը 14 օր է, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն: Ախտահանիչ նյութի pH - 7,8-8,8: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվում են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունի որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Նոր է, չօգտագործված:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Արմենֆարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2024/4-7-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
94			